

և Աննայ փայտը ձևաքը դիմաւորեր է 'Նորին Ա. վեհափառութիւնը, որ ջերմեռանդութեամբ Աննայ փայտը համբուրեր, և եկեղեցին մանկելով Վլադիմիրի մատրան առջև ծունկի վրայ աղօթեր է: Յետոյ Պատրիարքարան ելնելով, որ շքեղագէտ զարդարուած էր, հինգ բոպէի չափ նստեր է, և այն տեղ զոնուած հնութիւնները դիտելէ ետև, Ս. Պատրիարքին շնորհակալութիւն յայտնելով մեկներ է Հրէից Աինակոկայն երթալու համար:

Մասիս Թիւ 456

Սամաթիոյ Թաղական Խորհրդոյ հրաւրանօք, խորհրդարանը գնաց, և քարոզ մը խօսեցաւ: Սամաթիոյ մէջ այս առթիւ հանդէսներ կատարուեցան ի պատիւ 'Նորին բարձր Արքայնութեան:

Արուսաղիմոյ պատրիարքական նախորդ փոխանորդ Աէֆէրեան Վեր. Տ. Աիմէօն Ս. եպիսկոպոսը Պօլսոյ պատրիարքական խորհրդական (միւսթէշար) անուանեցաւ, Խաան ժողովոյ որոշմամբ և ամեն. Ս. Պատրիարք Հօր հաճութեամբ:

Փունջ Թիւ 464

### ՄԱՀԱՅՈՒՅՍԿԻ

Անցեալ ամսոյ մէջ Ս. Եթողոյս երկու միաբանները առ Եստուած փոխեցան:

Առաջինն է՝ Աղլազար Եբեղայ Խաչատրեան Վաղարշապատեցի, որ ծնած է 1840 թուականին և կուսակրօն քահանայ ձեռնադրուելով վեղար ընդունեցաւ 1867 մարտի մէջ: և նոյ. 15-ին ի կենաց զրկուելով, յաջորդ օրը միաբանութեան զերեզմանացն մէջ ամփոփուեցաւ մարմինը:

Երկրորդն է Խարայէլ Եբեղայ Տէր Պետրոսեան Բլեկի, որ ծնած է 1840 թուականին, և կուսակրօն քահանայ ձեռնադրուելով վեղար ընդունեցաւ 1864 օգոստոս ամսոյ: Վախճանեցաւ նոյեմ. 26-ին, և քանի ամս՝ ի վեր Ս. Պայանէ վանուց վանահայր զանուելով, յիշեալ վանուց հիւսիսային կողմը մալմինը թաղեցաւ 27-ին:

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը կիւրախէ օրը ազգային Հիւանդանոց երթալով, այցելութիւն քրաւ բոլոր պատասպարելոց: Յետոյ

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՅ ՍԻՆՕ ԴԻ

19 'Ար: Համաձայն փափագանաց և խնդրանաց ժողովրդեան Յաջորդութեան 'Աուսուոյ վեճակի, Յաջորդ Երժանա. Երիտասկէս Վարդապետի առաջարկութեան լուծումն շնորհեցաւ՝ իւր երաշխաւորութեան ներքեւ՝ 'Աուսի և Երէշ դաւաւկաց Աեղրոն՝ Խաչկաչէն, և Խաչմալու Վարալայ Վաւաւկաց կեղրոն՝ Վայքայ գիւղօրէից մէջ մէն մի Վաղրոց հաստատել մերազնեայ ուսումնակարօտ մանկաւոյն դատարարութեան և լուսաւորութեան համար:

21. — Համախոյ վեճակին Վիւլեճան գեղջ Յարութիւն Վահանայն Այվազեանց, յաղագս անգոսնելի և անզուսպ արբեցութեանն պատժեցաւ՝ առանց փրկոնի և տեղւոյն Ս. Աիեղեցւոյ դրան մօտ վեցամսեայ ապաշխարանաց ենթարկուելով մինչև յուղղութիւն վարուցն և ցկատարեալ ապաշաւութիւն յանգոսնելի ընթացիցն:

24. — Հրամանադրեցաւ Աճախատրիային Երցախոյ, Երժ. Երբահամ Վարդապետը համաձայն խնդրանաց մերազնեայ ժողովր-